

Մտիկեն անդին

Իւրաքանչիւր դրուագէն մեկնելով պատրաստուած այս ուղեցոյցները կրնաք ունենալ մեր ծրագիրին օժանդակելով մէկ անգամով: Զետեւեալ յղումով ձեր ցանկացած քանակով նուիրատուութիւն մը ըրէք: Այսպիսով թե՛ ներկայ ուղեցոյցները եւ թե՛ ապագայի ուղեցոյցները կրնաք ստանալ:

Ընդհանուր հարցումներ՝

- Ո՞ր գաղափարին հետ համաձայն ես կամ համաձայն չեմ:
- Դրուագին մէջ ամենէն շատ ինչի՞ն խնդացիր:
- Ո՞ր հարցումը, մասը, պատասխանը սիրեցիր:
- Եթէ դուն ալ այս դրուագին մաս կազմէի՞ր. ի՞նչ աւելցնել կ'ուզէիր:

Դրուագին վերաբերեալ հարցումներ

Պատմուած յուշերէն մէկը կամ նմանը քեզի պատահա՞ծ է:
Որ մէկը աւելի կը նախընտրես՝ Յիշատակ մտիկ ընելը թէ ոչ յիշատակ մը պատմելը:

Վարժութիւն՝ Յուշերու մասին «հապա եթէ» խաղա՞նք

Հապա եթէ կախարդական ցպիկով կարենայինք յուշեր սրբել:

Հապա եթէ ամէն օր մէկ օր առաջուայ օրը չյիշէի՞նք:

Հապա եթէ ամէն ինչ կարենայինք յիշել:

Հապա եթէ մեր ուղեղներուն մէջ բոլոր յուշերը արձանագրող գործիք մը ըլլար, որը երբ ուզէինք, կրնայինք նստիլ ու դիտել:

Հապա եթէ (դուն շարունակէ)

Վարժութիւն 2՝ Ստեղծէ յուշի տետրակ մը

Սկսէ շարանկարել յիշատակներդ: Խօսակցութեան փուլիկները, շարանկարի

քառակուսիները գործածելու սկսկէ՛ գծել քեզի շատ խնդացնող պահ մը:

Տետրակը լեցուր յուշերով անմոռանելի դարձնելու, դարձեալ յիշելու կամ խնդալու համար:

Մի մոռնար տետրակիդ անուն տալու:

